ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/186

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.11.2018թ. թիվ 27/26-3/21831-18 գրությամբ «Կոմպլենդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության 20.11.2018թ. թիվ Ե-40/11-6411 գրության հիման վրա, 29.11.2018թ. թիվ 27/26-3/21831-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Կոմպլենդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Կոմպլենդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Կոմպլենդ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ մասնակցել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-18/3-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ նաև՝ Աճուրդ) և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 8.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը առաջարկել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «Կոմպլենդ» ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելու օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Կոմպլենդ» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացվել օրենսդրությամբ և հրավերով նախատեսված փաստաթղթերը (Հավելված 2, Հավելված 3, իր կողմից հաստատված տեխնիկական բնութագիրը), գնահատող հանձնաժողովը՝ «Կոմպլենդ» ՍՊԸ-ին տվել է շտկման հնարավորություն, տվյալ օրը չհաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում, սակայն այդ ժամկետը լրանալուց հետո, «Կոմպլենդ» ՍՊԸ-ն կրկին ոչ մի փաստաթուղթ չի ներկայացրել, ուստի հանձնաժողովը որոշում է ընդունել մերժել «Կոմպլենդ» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 8.1-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը առաջարկել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Կոմպլենդ» ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելու օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Կոմպլենդ» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացվել օրենսդրությամբ և հրավերով նախատեսված փաստաթղթերը (Հավելված 2, Հավելված 3, իր կողմից հաստատված տեխնիկական բնութագիրը), գնահատող հանձնաժողովը «Կոմպլենդ» ՍՊԸ-ին տվել է շտկման հնարավորություն, տվյալ օրը չհաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում, սակայն այդ ժամկետը լրանալուց հետո, «Կոմպլենդ» ՍՊԸ-ն կրկին ոչ մի փաստաթուղթ չի

ներկայացրել, ուստի հանձնաժողովը որոշում է ընդունել մերժել «Կոմպլենդ» ՍՊԸ-ի հայտը:

Ընկերությունը հայտնել է, որ Աճուրդի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի (ըստ արձանագրության տեղի է ունեցել 02.11.2018թ.) թիվ 2 արձանագրությունը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է միայն 05.11.2018թ.-ին և Ընկերությունը eauction.armeps.am համակարգի միջոցով եռօրյա ժամկետում չի ստացել ոչ մի ծանուցում որակավորման փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ:

Նույն օրը, այն է 05.11.2018թ. գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակվել է նաև «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-18/3-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում հրավերի պարզաբանման մասին հայտարարություն, որը «Կոմպլենդ» ՍՊԸ-ին գցել է թուրիմացության մեջ:

Այնուհետև «Կոմպլենդ» ՍՊԸ-ն անակնկալի է եկել, երբ www.gnumner.am համացանցային կայքում միայն 14.11.2018թ. հրապարակվել գնահատող հանձնաժողովի 13.11.2018թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրությունը, ըստ որի միաժամանակ արձանագրվել է, որ «Կոմպլենդ» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացվել օրենսդրությամբ և հրավերով նախատեսված փաստաթղթերը (Հավելված 2, Հավելված 3, իր կողմից հաստատված տեխնիկական բնութագիրը), գնահատող հանձնաժողովը՝ «Կոմպլենդ» ՍՊԸ-ին տվել է շտկման հնարավորություն, տվյալ օրը չհաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում, սակայն այդ ժամկետը լրանալուց հետո, «Կոմպլենդ» ՍՊԸ-ն կրկին ոչ մի փաստաթուղթ չի ներկայացրել, ուստի հանձնաժողովը որոշում է ընդունել մերժել «Կոմպլենդ» ՍՊԸ-ի հայտը:

Ստացվել է մի իրավիճակ, որ 05.11.2018թ.-ին հրապարակված թիվ 2 արձանագրությամբ առաջարկվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից ներկայացնելու հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, սակայն 05.11.2018թ.-ից սկսած eauction.armeps.am համակարգի միջոցով չստանալով ոչ մի ծանուցում որակավորման փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ՝ 13.12.2018թ. կայացած նիստով միաժամանակ արձանագրվել է, որ սահմանված եռօրյա ժամկետում «Կոմպլենդ» ՍՊԸ-ն չի ներակայացրել որակավորման փաստաթղթերը, ավելին կայացրել է որոշում՝ «Կոմպլենդ»

ՍՊԸ-ին տալ շտկելու հնարավորություն, որի վերաբերյալ նույնպես «Կոմպլենդ» ՍՊԸ-ն ծանուցում չի ստացել և արդյունքում 14.11.2018թ.-ին թիվ 3 արձանագրությունը gnumner.am համացանցային կայքում հրապարակվելուց հետո է միայն «Կոմպլենդ» ՍՊԸ-ին հասանելի դարձել, որ «Կոմպլենդ» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացվել օրենսդրությամբ և հրավերով նախատեսված փաստաթղթերը (Հավելված 2, Հավելված 3, իր կողմից հաստատված տեխնիկական բնութագիրը), գնահատող հանձնաժողովը՝ «Կոմպլենդ» ՍՊԸ-ին տվել է շտկման հնարավորություն, տվյալ օրը չհաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում, սակայն այդ ժամկետը լրանալուց հետո, «Կոմպլենդ» ՍՊԸ-ն կրկին ոչ մի փաստաթուղթ չի ներկայացրել և արդյունքում «Կոմպլենդ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Արդյունքում «Կոմպլենդ» ՍՊԸ-ն ոչ միայն զրկվել է մրցույթից, այլև հայտնվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու փաստի առջև:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները՝ «Կոմպլենդ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/186 ընթացակարգի շրջանակներում 03.12.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.11.2018թ. թիվ Ե-40/11-6411 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2018թ. ընթացքում

համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով էլեկտրոնային աճուրդի ձևով հայտարարված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-18/3-1» ծածկագրով ընթացակարգի գնահատման ընթացքում, առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Կոմպլենդ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել հրավերով նախատեսված փաստաթղթերը (հրավերի հավելված 2-ը, հավելված 3-ը և իր կողմից հաստատված տեխնիկական բնութագիրը): Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հրավերով սահմանված կարգով, «Կոմպլենդ» ՍՊԸ-ին տվել է հայտի շտկման հնարավորություն, սակայն այդ ժամկետը լրանալուց հետո, Ընկերությունը կրկին ոչ մի փաստաթուղթ չի ներկայացրել, ուստի հանձնաժողովը «Կոմպլենդ» ՍՊԸ-ի գնման հայտը գնահատվել է անբավարար և կայացրել է հայտը մերժելու մասին որոշում: Արդյունքում՝ Ընկերությունը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնորդի՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/186 ընթացակարգի շրջանակներում 03.12.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/186 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/186 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-18/3-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Կոմպլենդ» ՍՊԸ-ն:

2. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 02.11.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Կոմպլենդ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ

զբաղեցրած մասնակից, որին 03.11.2018թ. էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով ծանուցվել է սահմանված ժամկետում և կարգով որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 13.11.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Կոմպլենդ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել հրավերով նախատեսված փաստաթղթերը (Հավելված 2, հավելված 3, ապրանքի տեխնիկական բնութագիր):

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.11.2018թ. թիվ 27/26-3/21831-18 և 17.12.2018թ. թիվ 26-1/[1276545]-18 գրությունը, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության 20.11.2018թ. թիվ Ե-40/11-6411 գրությունը և կից փաստաթղթերը, «Կոմպլենդ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի

հայտը, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-18/3-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Կոմպլենդ» ՍՊԸ-ն:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 02.11.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Կոմպլենդ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 03.11.2018թ. էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով ծանուցվել է սահմանված ժամկետում և կարգով որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 13.11.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Կոմպլենդ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել հրավերով նախատեսված փաստաթղթերը (Հավելված 2, հավելված 3, ապրանքի տեխնիկական բնութագիր):

Աճուրդի հրավերի ՄԱՍ I-ի 7-րդ կետի 7.10-րդ ենթակետի 3-րդ պարբերության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը սույն հրավերի 1-ին մասի 7.9 կետում նշված նիստն ավարտվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում՝

ա. գնահատող հանձնաժողովին ուղղված ուղեկցող գրությամբ ներկայացնել հայտի ապահովման բնօրինակը.

բ. համակարգի միջոցով ներկայացնել առաջարկվող ապրանքի ապրանքի ամբողջական նկարագիրը.

գ. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

դ. համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).

ե. սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:

Սույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.9-ից 7.10-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝

1) համակարգի միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 2-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

ա. իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 3-ի.

բ. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

գ. համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով). Ընդ որում համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, բացառությամբ որակավորման չափանիշներին վերաբերող փաստաթղթերի, որոնք հաստատվում են կոնսորցիումի առանձին անդամների կողմից՝ համաձայն կոնսորցիումի պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության:

դ. զ. սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:

«Կոմպլենդ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը չի ստացել հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ ծանուցումը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 10.12.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/[1274745]-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով

հայտնել, թե ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-18/3-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «Կոմպլենդ» ՍՊԸ-ին ուղարկվել է արդյոք որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ ծանուցումը, թե ոչ, և արդյոք այն ստացվել է Ընկերության կողմից:

Ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 17.12.2018թ. թիվ 26-1/[1276545]-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է էլեկտրոնային աճուրդի համակարգը սպասարկող կազմակերպությանը: Վերջինս տեղեկացրել է, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-18/3-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով իրականացված գնման ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ուղարկվել «Կոմպլենդ» ՍՊԸ-ին 03.11.2018թ. ժամը 13:05:59-ին, որն էլ Ընկերության կողմից կարդացվել է 05.11.2018թ. ժամը 10:10:44-ին: ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է նաև, որ էլեկտրոնային աճուրդի համակարգը սպասարկող կազմակերպությունը հայտնել է, որ հիշյալ ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր տվյալների հենքում առկա չեն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հրավերի 7-րդ կետի 7.12-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով

նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.12.2018թ. թիվ 26-1/[1276545]-18 գրությունն, արձանագրում եմ, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-18/3-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Կոմպլենդ» ՍՊԸ-ին պատշաճ ձևով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ, սակայն Ընկերության կողմից այդ փաստաթղթերը չեն ներկայացվել:

Գտնում եմ, որ Ընկերությունը «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-18/3-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.11.2018թ. թիվ 27/26-3/21831-18 գրությամբ «Կոմպլենդ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00875953) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Կոմպլենդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ